

պատկանում էր Տարսային Օրբելեանի որդի Ջալալին, որից նրա եղբայր Ստեփանոս եղիսկոպոս պատմաբանը զնեց 22 000 դրամի և ընծայեց Նորավանք վանքին 1298 փրկչական թուրին:

Այժմ այս հոգերը պատկանում են Թուրք Վեհրիլովներին, որ

բնակում են նոյն այս գիւղում:

ՀԱՐԱԽԱՑԻՆ ՎԱՅՈՑ-ԶՈՐ

Դիմուշխանէի ճոր.—Արփաջայի ձախակողմեան առաջին վտակը Դիմուշխանէի-շայն է, որ Թերփ-վտակի հետ միանալով՝ Թարփ-չայ անունով թափում է Արփաջայի մէջ Չայքենագիւղի մօտ: Դիմուշխանէի վտակի վրայ, Ղըսըր-դաղ լերան լանջին, զետեղուած է Դիմուշխանէ թթարնակ գիւղը, որ թէպէտ շատ զետեղիկ տեսք ունի, սակայն ոչ մի, փոքր ի շատէ յարմարուոր տուն կամ սննեակ չունի: Այստեղ ևս կայ հայկական եկեղեցու մի աւերակ և արևելեան ըլլի վրայ մի զերեզմանատուն, ուր կայ մի խաչքար 1309 թուականից:

Դիւղի բնակիչները բոլորն էլ Թուրքեր են, 27 տուն, 107 ար. 99 իգ. իմիասին՝ 116 հոգի:

Դիւղի երեք վերաս հեռու զանուում է Դիմուշխանէի արծաթահանը նոյն Ղըսըր-զաղ լերան մէջ:

Թերփ-վտակի և արտ ճիւղերի վրայ տեղաւորուած են երեք փոքրիկ, թթարնակ գիւղեր՝ Թերփ, Լէյլիդաշան և Ֆէշպէկ կամ Քէօշպանէկ: Սրանցից Թերփը, որ հին Դերքը պիտի լինի տեղաւորուած է ձորակի մէջ, մի տափարակ տեղում և զարգարուած է ծառերով: Դիւղի մէջ հսուում է մի ազրիւր, որի վրայ բերել են մի խոյածն գերեզմանաքար, 1334 փրկ. թուականի տապանագրով: Այսպիսի մի գերեզմանաքար էլ մի քիչ հեռուն է կանգնեցրած: Դիւղի ներքին մասում կայ մի աւեր եկեղեցի և մի գերեզմանատուն, ուր կան ժիշ—ժիշ: Պարերի տապանագիրներ:

Բնակիչները թուրքեր են, 45 տուն, 197 ար. 194 իգ. իմիասին՝ 391 հոգի:

Լէլիդաշանում նոյնպէս կան հին աւերակներ, գերեզմանաքարեր, ձիթահանք, բայց առանձին ուշագրութեան արժանի չեն: Այստեղ վերջերս բացել են յիսունի չափ հին հանգային հորեր, սակայն հանգային նոր շերտ չեն գտնել: Դիւղի անունը յառաջացել է այն հանգամանքից, որ Զուլեյի մի թուրք այստեղից Լէյլի անունով մի աղջիկ է փախցրել:

Բնակիչները թուրքեր են, թերփից գաղթած, ընդամենը 35 տուն, 169 ար. 180 իգ. իմիսախն՝ 349 հոգի առաջնային պալատ

Քոշպէկ կամ Քէօշպանզը, որ հաւանօրէն Օրբելիանի յիշած Հաշիմարգ գիւղը պիտի լինի, հիանալի է իւր գիրքով, սակայն կեղառու է և զուրկ որմէ վայելուչ շինութիւնից, Այստեղ ևս եղել է հայկական մի հին եկեղեցի, որ այժմեան թուրք բնակիչները բանդել են և քարերը գործածել իրենց տների շինութեան վրայ:

Բնակիչները Զայքեանտից գաղթած թուրքեր են, 54 տուն, 236 ար. 208 իգ. իմիսախն՝ 444 հոգի:

Այս գիւղի մօտ Են Թօարփի, Դեմուրշիլար և Զրախլու թրքարնակ փոքրիկ գիւղերը, որոնց մէջ միակ ուղագրաւ բանը մի երկու հին գերեզմանաքար է և ուրիշ ոչինչ: Թարփի բնակիչները 27 տուն են, 137 ար. 118 իգ. իմիսախն՝ 255 հոգի, Դեմուրշիլարինը՝ 17 տուն, 65 ար. 60 իգ. իմիսախն՝ 125 հոգի, իսկ Զրախլուինը՝ 8 տուն, 28 ար. 24 իգ. իմիսախն՝ 52 հոգի:

Զուլի կամ Զայքենտի ծոր.—Մըա միջով հոսում է Զուլ կամ Զայքենտի—վասկը, որ սկիզբն է առնում Թիշալ-դադ լեռնից (10278) բլիսող բազմաթիւ աղբիւրներից և ընդունելով Մ'արաթուզի կամ Քիլիսա-թուլախն փոքրիկ առուակը՝ թափուում է Արփաչայի մէջ Զայքենտ գիտի մօտ Այս ձորի միակ գիւղն է Զուլը, որ Օրբելիանի ցուցակի մէջ յիշուած Աջողքը պիտի լինի: Գիւղը շատ գեղեցիկ տեսք ունի, փռուած է առուակի ափին, փոքրիկ տափարակի վրայ, Հարաւային կողմում ձգուող Հայքարասի լեռները ծածկուած են ծառերով, տեղ տեղ էլ մերկ են և ապառաժուու Այսպիսի մի տեղում, գիւղի հանգիւյ, կան չորս անմասնիկ քարայրներ: Գիւղի արևելեան կողմում, սարալանջին, կանցնած է սրբատաշ, բաւական մեծ եկեղեցու չորս պատերը, առանց ձեզունի: Մըա արեմատեան գան կողքին զրուած է Երևանցաւ եկղոց թվին Ռմէ՛՛ (1152—1703) թէպէտ այսքան ուշ, սակայն սեղանի մէջ կայ մի գերեզմանաքար Զօ (940—1491) թուականից, հետևապէտ և գիւղը շատ աւելի հին է: Եկեղեցուց փոքր ինչ բարձր, լերան լանջին փռուած է մի ընդարձակ գերեզմանատուն, որի տապանաքարերից շատերն արգէն տարուած են և շինութեան համար գործածուած: Տապանաքարերից շատերը ժիշ և ժիշ, զարերի թուականն են կրում: Գիւղի մէջ նոր սկսել են շինել միքանի կանոնաւոր սենեակներ, միւսները կիսազիտնափոք զիւսամեներ են: Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, 116 տուն, 620 ար. 591 իգ. իմիսախն՝ 1211 հոգի: Պարտպում են

երկրագործութեամբ և անամնապահութեամբ։ Կանայք շատ լաւ կազերաներ և բակեղաթիւներ են գործում։ Չնայելով որ բաւական մեծ դիւդ է, այսուումնեայնիւ ոչ մի խանութ չկայ¹⁾։

Զուլից 3—4 վերստ հեռու գէպի հարաւ՝ Ղայարասի լեռն առառաօժուա և ուղղանացնեաց կատարներով ձգւում է և միանգամայն անմատչն լի զառնուում։ Ան մի այսպիսի տեղում մի շատ նեղ կածան բարձրացնուում է մինչև ապառաժի գրեթէ գագաթը, ուր կան միմեանց կից երկու անազին քարայրեր, առջևից պատքաշած։ Սրանցից մինի մէջ կայ մի անազին, 3 արշին երկարութեան, 2 արշ։ լայնութեան և մի արշին հաստութեան կարմիր գերեզմանաբար, վերան մի մեծ և հասարակ խաչ քաշած։ Միւսի դան ճակատին փորագրուած է։ Թս. Ած. ողորմա մեռ... ըստի մարտիրոսաց։ Այս քարայրների հանգէպ, մատ 100 սաժէն հեռու բարձրանուում է մի ժայռապատ ցից զագաթ, որի մասին թուրք առաջնորդս ասում էր, թէ ժամանակով ամբոց է եղած, թէպէտ և ոչ մի հետք չէր երևում, և ոչ մի հնարաւորութիւն չկար զագաթը բարձրանալու։ Զուլից մատ 2 վերստ գէպի արևելահրամաւուին, երկու փոքրիկ առուակների միջավայրում, տեղաւորուած է Մարաթոնց գիւղը, որ հաւանօրէն Օրբերեանի յիշած Մայրադուրք կամ Մայրազուրքը պիտի լինի։ Այսուեղ կայ մի կիսաւեր եկեղեցի, որի արևելեան լուսամուխ վերև քանդակուած է մի կանգնած արծիւ։ և մի ցլան գլուխ։ Նկեղեցու առաջ բղիում է մի յարդ աղբիւր, որ անցնուում է եկեղեցու միջից։ Գիւղի հիւսիսային կողմում բանձրացող թլրի վրայ կան միքանի կապոյտ տապանաքարեր, բաւական հետաքրքիր քանդակներով։ Սրանց մատ ընկած են ձիթանաքի երկու քար։ Գիւղի արևելեան կողմում, մի ժայռի ստորառում, հումում մի կողմից միայն պատ քաշելով կազմած են եղել մի մեծ լիամբար, որ այժմ նախալիս կիսաւեր է։ Բնակիչները թուրքեր են, 29 տուն, 120 ար. 118 իգ. իմիասին՝ 238 հոգի։

Ախտոյի ձոր.—Զուլից ձորին գրեթէ զուգահեռական ձգւում է Ախտոյի ձորը, որի միջով հոսում է համանուն վտակը, սկիզբն առնելով Քեշալ-դադ և Քիւքի-դադ լեռներից։ Այս ձորը ևս շատ գեղեցիկ տեսք ունի, ինքնատիպ են, մանաւանդ, Ղայարասի լեռու

¹⁾ Զեմ կարողանում մոռանալ, որ այս գիւղում եղած միջոցին ինձ զարթեցրեց մի թուրքի ազիսզորմ լացը. խեղճի ցաւած տուամը հարևանը անազին ունելիով քաշելիս այսպէս էր ձգել, որ ծնօսը անդահան էր եղել, երբ ինձնից ևս օգնութիւն չգտաւ, քարեկամները տարան նրան Ախտա գիւղը սափրիչի մոտ։

Ների մերկ և ժայռապատ, երբեմն կապուտակ, երբեմն կարմրաւոյն գագաթների շարքը, Զորի ամենահարաւային մասը գեղեցիկ ձմերանոց է, իսկ նրանից զերև՝ նազ-իւրդի գագաթը՝ հիանալի ամարանոց: Զորի ամենահարաւային մասում, նազ-իւրդ և Ղայարասի լեռների գոգաւորութեան մէջ զրուած է Գիւրուտ գիւղը, որ Օրբելեանի յիշած Ղազլյուտը պիտի լինի: Գիւրդը զարդարուած է ծառերով և տների առաջ կան բանջարանոցներ: Հայկական եղեղեցու միայն հիմնապատերն են մեացել, շուրջն էլ մի երկու գերեզման:

Գիւղի հիւսիսային կողմում, դարձեալ նոյն, Ղայարասի և նազ-իւրդ լեռների միացմամբ կազմուած մի փոքրիկ հավատմ կայ մի անսին, փոքրիկ, կիսաւեր եկեղեցի, մատը միքանի կարմիր, զեղեցկացանդակ խաչարձաններ, մէն: դարից, ինչպէս նաև մի ժմանարձան, բարձր և բարակ, որոյ երկայնութիւնն երեսուն քայլ և ի ծայր նորին պատկեր Տիրամօր ի գրկի ունելով Պրկիչն աշխարհից¹⁾, բայց ափսոս որ Սէս գիւղի քահանան կարծելով թէ որս տակ զանձ կայ թաղուած, եկել՝ տապալել ու կոտրատել է այս հիմնալի կոթողը: Հանդիպակաց ժայռի կրծքին քանդակուած են բաւականաշատի, մեծ և փոքր խաչեր: Մի քիչ ներքեւ, մի բըրբակի գագաթին, կան բաւական գերեզմանաբարեր: Զորը գեղեցիկ տեսք ունի: միջովը անցնուած է մի փոքրիկ առուակ:

Գեարուտի ընակիչները Ղարախորի թուրքեր են, որոնց հին սերնդի մայրենի լեզուն քրդերէնն է, սակայն նոր սերունդը միայն Ատրպատականի թուրքերէնը դիտէ, չափազանց անկիրթ, զող և անպիտան ժողովուրդ են. ընդամէնը՝ 25 տուն, 90 ար. 84 իգ. իմիասին՝ 174 հոգի:

Դեարուակից գէպի արևմուտք, ձորի արևմտեան բարձրութեան վրայ դրուած է Գիւնուրը կամ Վերին Ախտա գիւղը: Հաւանական է, որ սա հին Գոմքը լինի, որ աշխարհաբար Գոմքը է զառել և սրանից թուրքերը Գեարուտ են դարձել: Գիւրդը փոռւած է նազ-իւրդի լանջին, և նորա հանգէզ, ձորի արենելեան կողմում, Ղայարասի ժայռապատ, մերկ լեռները մի սբանչելի տեսարան են ընծայում: Նազ-իւրդի ամբողջ լանջը, ինչպէս և ձորը, պատած է հարուտ բուսականութեամբ: Այս բնական գեղեցկութեան մէջ մի ցաւալի հակագրութիւն են կազմուած թուրք բնակիչների կիսապետափոր, ողորմելի տները: Գիւղի մէջ կայ մի, բաւական ըն-

¹⁾ Զալալեան. ճանապարհ. Բ. եր, 205.—Ձշտօրէն նկարագրելով վանքը և Զալալեան սխալմամբ տեղաւորել է նրան Վերին Ախտայում, մինչդեռ նա զմնաւում է Գեարուտի մաս:

դարձակ, բայց հասարակ եկեղեցի մի գաւթով, այժմ կիսաւեր և անսանոց ազդով լի: Դիւղի հանդէպ, ձորի անմիջապէս ափին, մի փոքրիկ հարթութեան վրայ կանգնած է մի խոշարձան և մի փոքրիկ, հրաշալի մատուռ, որ չենել են 1263 դրկշական թուրին, Պոչ իշխանի օրով, Առյօնի որդիներ՝ Միքիթարը և Արեիկը:

Խաչարձանը մի սաժէն բարձրութիւն ունի, կանգնած է մի արշին բարձրութեան պատուանդանի վրայ, և պատաժ է քարե գեղեցկարանդակ շրջանակով, որի վերին մասում փորագրուած է Կազմեցաւ խաչը ի բարեխաւսութիւնը Աւտարշաւին թռոան Խոյզանայ, իսկ շուրջը՝ ի թվ. չ. Զժ՛ր բարեպաշտ իշխանութեան Պոշոյ Միքիթար, Արեիկ որդի Խոյզանայ կանգնեցաք խաչը եւ մատուռը. ի գիշը ծիկեղեցի խակ չկար շինած զեկեղիցին այս մեթ շինեցաք մեր հալալ արդեամթք բազում աշխատութեամթք մեզ եւ ամրունոյն մերոյ, որը կարդաք յիշեցէք յաղաւիս:

Սոյն իմաստը պարունակող մի արձանագրութիւն էլ կայ խաչի ստորին մատուռ, պատուանդանի մաս 1) որի վրայ քանդակուած է մի ցուլ և մի շղթայակապ տուիւ:

Խաչարձանի արևելահայեաց երեսին կից է մի փոքրիկ, կոփածոյ, սազաշէն մատուռ, մի գնանով: Մատուռի արևելեան պատճն քանդակուած է մի արձիւ, որ թիերը կիսով չափ տարածած, մազիներով բռնել է մի խոյ: Աջ և ձախ վանդակների մէջ կանգնած են մի մի աղասինի: Հիւսիսային պատճն, միակ գոան վերե, գեղեցկարանդակ խաչի շուրջը պատահ է: Կազմեցաւ խաչը բարեխաւութիւն Ծղիսէ քահանային, որը պատարագէք յիշեցէք ի սուրբ պատարագս մեր:

Հարաւային կողմում, խաչարձանի շրջանակի վրայ, քանդակուած է արեպակնային ժամացոյց հայկական թուանամարներով: Մատուռի մէջ կայ մի փոքրիկ բռմ և մի կոտրած վէմ քար: Մի մի փոքրիկ պատուաններ էլ բացում են երեք պատերի մէջ: Այս մատրան շուրջը կան բաւականաչափ գերեզմանաքարեր 2):

Գեօմետրի կամ Վերին Ախտայի բնակիչները թուրքեր են, 47 տուն, 184 բգ. 176 ար. իմիասին 360 հոգի:

Գէօմետրից մի ձորակ ձգւում է դէպի արևմտամք, ուր կայ մի յորդ ազդիւր, մատը մի խոնքար հետեւել արձանագրութեամբ.

1) Ցես արձանագրութիւնների մասունք:

2) Հայր Արիշնի Սիստանի մէջ ոյր մատուց և խաչարձանը իրենց արձանագրութիւնները երկու անգամ են նկարագրուած. միեւ Գէօմետր (Գէօմետր) միւս Վերին Ախտա գիւղում, մինչդեռ այդ երկու մասնեւն էլ մինեսից դիպին են պատկանում:

ի թվականին հայոց ԶԼԸ¹⁾ իշխանութեան Պապաքին եւ Ամիր Հասանայ, եւ Սարգիս եւ որդին իմ Թետրոս շինեցաք զաղըուրս եւ կանգնեցաց զիսաշո... Զորը այս խաչարի պատճառով կոչում է Խաչղարասի կամ Խաչի-ճոր:

Գեօմեորից հիւսիս, Ախտա-շայի ափին, զետեղուած է Ներքին Ախտան, ուր կայ նոյնպէս մի կիսուեր, հասարակ եկեղեցի և միքանի գերեզմաններ: Բնակիչները թուրքեր են, 46 տուն, 206 ար. 197 իգ. իմիասին՝ 403 հոգի:

Մարտիրոսի ճոր.—Եադ-իւրդի կանաչագարդ լեռներին արեւելեան կողմից միանում է Թեշալ-դաղ լեռնաշղթայի Նըզար ճիւղը, կազմելով մի ձորակ, որի միջով հոսում է Եադ-իւրդից ու Թիւքի-դաղ լեռից սկիզբն առնող Մարտիրոսի գետակը: Սա անցնելով Փաշալուի միջով Թօփուում է Արփաչայը: Այս գետակի ձախ ափին, մի տափարակի վրայ փոռուած է Մարտիրոս գիւղի Միկիթարի-աղբիւրի մօտ կանգնած կարմր, նրաքանդակ, և սամէն բարձրութեան խաչարձանը.

Սո Միկիթար որդի Դեղկայ հրամանաւ իշխանաց իշխանին Պոռույ ծո որդույ իւրոյ Հասանայ շինեցի զգիւզ Մարտիրոս, եւ կանգնեցի զիսաշո ի գուռն սուրբ վկայարանին, ի բարեխաւութիւն ինծ ծո ամսունոյն իմոյ Մարտիրոսին եւ որդույ իմոյ Խարիբցանին եւ դատերն իմոյ Ռուզութանին: Կազմեցաւ ծեռամբ Շնորհաւորին ի թվին ԶԼԸ²⁾ որբ ընթեռնուուց յիշեցէք:

Ուրիմն գիւղը 600 տարուց աւելի է, որ շինուած է, ուստի և ունի իւր շրջակայքում հինգ ընդարձակ գերեզմանատներ: Այս խաչարձանից փոքր ինչ հեռու բարձրանում է գիւղական եկեղեցին, զմբէքաւոր զանգակատնով, որ կառուցուած է հին եկեղեցու հիմնապատերի վրայ: Գիւղի մէջ կան բաւականաչափ գեղեցիկ շինութիւններ, որոնց առաջ տարածուում են փոքրիկ պարտէզներ: Բնակիչները Սալմաստի Ենզիջայ, Փարաջիկ և Սաւրի գիւղերից են, միքանին էլ Խոյից, Աղբակից և Վանից: Գիւղի կլիման ցուրտ լինելու պատճառով բնակիչները պարապում են միայն անամնապահութեամբ, երկրագործութեամբ և մեղուապահութեամբ, ցանում են նաև մեծ քանակութեամբ կարտոֆիլ: Ընդամէնը 125 տուն են, 681 ար. 638 իգ. իմիասին՝ 1319 հոգի: Ընդհանրապէս առողջ, յաղթանգամ և քաջ մարդիկ են, մասամբ և՛ օդի սիրող:

1) 1288 գրիշական թափն: 2) 1283 թափն:

Դիմումը կայ մի մասրունքի և մի ռոթեղեղէնի խանութ, 11 ըստ-
դաց և 2 ձիթահանք:

Մարտիրոս դիւզից երկու վերաբ արևելանարաւ, գետակի աջ ափին, կան երկու վիմափոր եղիծղցինները, Սրանք փորուած են Նպար լիրան այն մասում, որ բարձրացած է կրախանձ աւազա-քորից։ Դրաից երկուամ է մի բոլորակ պատուհան լիրան լանջին և մի փոքրիկ քարայր՝ սուրբուռն։ Այս քարայրից մի դուռն տանում է մի փոքրիկ գաւիթ և ապա առան արշնչալափ քառան-կիւնի մի եկեղեցի, անսիւն, Զեղունը զմբէթաձեւ փորուած է և մի մի կըսր փոքրիկ պատուհանով լոյս աշխարհի հետ հաղորդակ-ցուած։ Ունի մի սեղան, նոյնովէս վիմափոր վէճքարով, առանց խորանների։ Արևմտեան պատի մէջ ևս, դռան վերնք բացուում է մի փոքրիկ պատուհան։ Պատերի վրայ փորուած են մնեց և փաքք խաչեր։ Յատակում կան երեք շարք տապանագրաներ առանց առ-պանագրների։ Հարաւային պատի մէջ բացուող մի դուռն տանում է մի ուրիշ եկեղեցի, որ առաջնից փոքր է, 9 արշ. երկ. և 7 արշ-այնութեան։ Սրա ձեղունը ևս զմբէթաձեւ է փորուած, և պատե-րին կից 4 սիւն ձևացրած։ Ունի սեղան և երկու խորան։ Արե-մտեան պատի մէջ կայ մի դուռն ուղղակի գէպի դուրս, բայց պատով ծածկուած է։ Դուռն վերնք բացուում է մի լուսամուտ։ Սե-ղանի աջ կողմում կայ հետեւեալ արձանագրութիւնը, որ համար-ուած է այս եկեղեցիների միակ, պատմական աղբիւրը.

Կամաւն Աստուծոյ ի հայրապետութեան Յակոբայ եւ ի ցանանայսպետութեան զաւառիս Տէր Սարգսի, եւ ի տէրութեան իշխանաց իշխանին Պոլչոյ եւ որդուց Նորին Պապացայ եւ Հասանայ... եւ որդույ պարոն Եալոյ եւ մաւր Նորին Պարոն... Նո Մատթէոս վարդապետ կանգնեցի... եւ կատարեցի զեկեղեցիս ի բարեխաւսութիւն ինծ եւ Պետրոսի եւ ծնողաց մերոց եւ պարոնաց մեր եւ ամենայն հաւատացելոց որք մոտանէք Աստուծ ողորմի ասէք մեզ, եւ ծեզ եղիցի. Թվին 21:3).

Այս Մատթէոս վարդապետի կանգնեցրած մի խաչարձանն էլ այժմ զանուռմ է այս եկեղեցուց արևմտաք, գերեզմանատան մէջ:

Այս եկեղեցիների մօտ կայ նաև մի քարայր, մէջը մի փոքրիկ բեմ: Տեղացիները սրան Ծանալորի տեղ են կողաւմ և աւանդում են, թէ մի ինչ որ ճգնաւար է նգնել այդանոց: Այս վիճակոր եկեղեցիների առջէ, զետակի ձախ ափին, նկատելի են մի աւել եկեղեցի և աների հիմնապատեր, պետք մէջ փորուած հացահա-

²⁾ $\Phi_{\text{phi}} = \frac{1}{2} \pi - 1286$ μWb .

արիներ պահելու հորեր, երկու ջրազացի աւերակներ և այնու Մարտիրոսի բնակիչները զաղթականներ լինելով, ոչ մի աւանդութիւն չունեն այս եկեղեցիների մասին, միայն կոչում են սրանց ս. Աստուածածնի անունով և նրա տանին ուխտ գալիս այստեղ:

Բոլոր հոռթիւնները նկարագրած լինելու համար յիշեմ նաև որ մարտիրոսցիներն ունեն նաև ս. Յովհաննէս անունով մի փոքրիկ մատուռ Յաղ-իւրդի ստորոտում, ուր միմնանց մօտ կանգնած երկու խաչքարերի մատով անց են կենում ջերմողները, առողջութիւն հայցելով:

Մարտիրոսից դէպի հարաւ, մօտ եօթը վերստ հնուու, նոյն գետակի վրայ գրուած է Փաշալու գիւղը, որ հաւանօրէն Օրբելիանի յիշած Փշօնը գիւղը պիտի լինի: Ջորակը նեղ լինելով անները կուտակուած են միմնանց վրայ: Դիւզում կայ մի եկեղեցի և երկու ուխտատեղի ս. Յակոբ և ս. Վարդառէ անունով, վերջինիս միմիայն կանայք են ուխտ վնում, առանձապէս երեխանները ծաղիկ հանած միջոցին: Այսաեղ է գանուում շինական դատարանը և Փաշալուի հասարակութեան պետական միգաւեան գովրցց: Բնակիչները զաղթականներ են Սալմաստի Առաջդիրան, Հաւթուան, Ստերի և Ղարաբաղ կոչուած գիւղերից: պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մնդուապահութեամբ: Վերջերս սկսել են խաղողի այգիներ ձգել, չրաւականանալով պարզաբու ծառերի պարտէցներով: Ընդամէնը 77 տուն են, 460 ար. 424 բգ. իմիասին՝ 864 հոգի, ընդհանրապէս պճամաէր են և բարոյապէս փոքր ինչ ընկած, Փաշալուից մօտ 3 վերստ ներքի, նոյն ձորում գրուած է Ղարաբաղ թրքաբնակ, աննշան գիւղը 19 տուն բնակչով, 50 ար. 42 իգ. իմիասին՝ 92 հոգի:

Մարտիրոսի ձորից մինչև Կոհշիկի ձորը չկայ ոչ մի նշանաւոր ձոր, ուր գետեղուած լինին միքանի գիւղեր, այլ փոքրիկ ձորակներ են, որոնց միջով հոսում են նրանց վերև, հարթութեան վրայ տեղաւորուած գիւղի աղբիւրների ջրից գոյացած տունկները: Այսպէս Փաշալուից դէպի արևմտահիւսիս փոքրիկ հարթութեան վրայ գետեղուած է Փոր կամ հին Բոր գիւղը: Այսաեղ հայկական պատմական շրջանից ոչ մի նշանաւոր հոռթիւն չկայ, միայն կան բրոնզի զարից գերեզմաններ, որնցից մինի մէջ զանուեց մի բաւական գեղեցիկ դաշոյն և մի քանի ապարանջաններ: Դիւզում կան բաւական գեղեցիկ աններ, մի ուղիղ, լայն փողոց զարդարուած ծառերով և մի եկեղեցի, որի տափարակ կտրան վերայ փորեցի խաչազողները թիթեղեայ կեղծ գմբէթ են բարձրացրել, որպէսզի դրսից գեղեցիկ երևայ, մինչդեռ ներսից

շատ ողորմելի է: Բնակիչները Սաւրի գիւղից են, և այստեղ էլ, մանաւանդ առաջները, մեծ մասամբ խաչագողութեամբ են պարապում, ճանապարհորդներով Ռուսաստան: Այժմ մասամբ թողել են այդ և պարապում են առևտով, Ռուսովովում, Արմաւրում և այլ տեղեր խանութիւններ բաց անելով: Դիւղում տղամարդիք շատ բիշ կան, մանաւանդ ձևեց, և կանայք չափազանց ընտելացած են ինքնուրոյն կեանքին: Ընդամէնը 75 տուն են, 395 ար. 265 իգ. իմիասին 660 հոգի:

Փորից գէպի արևմուտք, հարաւայից հիւսիս ձգւում են երկու խոր ձորներ, որոնցից յետոյ, հարթութեան վրայ փռուած է Ազատակի գիւղը: Սա ևս բաւական գեղեցիկ տեսք, մեղմ կլիմայ, տաքուր ոգ և սառնորակ ազդիքներ ունի: Դիւղում կայ մի հասարակ, մեծ եկեղեցի, որ վերանորոգուած է 1655 թուին Յակոբ կաթուղիկոսի ժամանակ և մի, նոյնպէս հասարակ, մատուռ մի երկու խաչարով: Դիւղի հարաւային կողմում ցցուած մի լեռան գագաթին էլ նկատելի են մի ամրոցի հետքեր և մի կիսաւեր մատուռ: Աւանդութիւնն առում է թէ մի հայ իշխան իւր ժողովրդով հեղեղ ազատանելի է այս բերգում մի արինարբու թշշնամուց և այսպիսով ազատ է մասցել նրա ստրկական լծից: Քնամին հնուանալուց յետոյ նա իջել է լեռից և նրա ստորոտում հիմնել այժմեան գիւղը և ի յիշատակ այդ ազատութեան Ազատ կոմ Ազատակ կոչել: Վերջին ժամանակներու էլ այդ բերդը ազատել է ազատակցիներին մի ուրիշ բռնաւորից—զարալազեազից Երիբն սուլթանից, որ 1855 թ. ուսու-թրբական պատերազմի ժամանակ ապստամբեց սուսաց կառավարութեան դէմ և ցանկացաւ կոտորել Պարալազեազի հայերին:

Բնակիչները Սալմաստի Սաւրի և Սարամէր գիւղից են, 7—8 տուն էլ մշեցիներ, նոյն ժամանակներում զազթած: Ընդամէնը 110 տուն, 462 ար. 457 իգ. իմիասին՝ 919 հոգի: Առաւելապէս պարապում են երկարգործութեամբ և անաւանապահութեամբ: Առաջները սրանք ևս պարապում են խաչապութեամբ, սակայն այժմ կամ առևտուր են առում Ռուսաստանում, կամ բանուրութիւն և կամ ուղղակի մուրացկանութիւն, որովհետեւ այժմ այլևս նրանց հաւատացողներ չկան: Գազթականութեան որպէս անմիջական հետևանք՝ գիւղը վարակուած է վեներական ախտերով և բարյականութիւնն էլ մասամբ ընկած է: Թէ զգեստի, թէ նիստ կացի և թէ լեզուի մէջ տիրում է բազմազանութիւն, խառնուրդ:

Ազատակից գէպի հիւսիս, մի ուրիշ առուակի վրայ զանուում է Ղարախլու թրբարնակ, աննշան գիւղը 33 տուն ընակլով, 143 ար. 124 իգ. իմիասին՝ 267 հոգի:

Սրանից էլ գէպի արևմտաց Զէյթա կամ Զովմաշոմանս գիւղը 26 տուն թուրք բնակչով, 195 ար. 157 իդ. իմիասին՝ 353 հոգի:

Նոյնքան անշան է նաև սրա մօտ, մի փոքր ինչ արևմտահրախ գտնուող Ղուրան-թեատրլան զիւղը, որի մօտ, մի բլրակի վրայ կայ մի աւերակ եկեղեցի Բնակիչները թուրքեր են, 20 տուն, 180 ար. 148 իդ. իմիասին՝ 328 հոգի:

Ղուրան-թեատրլանից արևմտաց և ձգւում է մի ուրիշ խոր և նեղ ձոր, մասամբ ընկուզենիներով պատաժ, որի պատճառով և կոչւում է Ղոզլու-դարաս, այսինքն Ընկուզանոր: Սրա միջով հոսում է Ղուրդուլազի գետակը, որի հետ խառնում է Թոսի-ջուր հանքային ջուրը: Զորի բարձրութ կանգնած է Ղուրդուլազի սրածայր սարը, որ այսպէս է կոչում, որովհետեւ նրա վրայ ցցուած են երկու, իրը գայլի ականջի նմանութիւն ունեցող քառաժայռեր: Սարի լանջին փռուած է Ղուրդ-զուլազ թրքաբնակ զիւղը, 45 տուն բնակչով, 322 ար. 225 իդ. իմիասին՝ 547 հոգի: Այսահետ նշանաւոր են երկու քարէ աւազաններ, որոնց մէջ թափուում է հին ժամանակներում խողովակներով բերուած աղբերի ջուրը: Գիւղի հարաւային կողմում, փոքր ինչ հեռու, կայ մի զիւղատեղի, երկու աւերակ եկեղեցիներով, որոնցից մինի վրայի արձանագրութիւնը ցոյց է տալիս, որ այդ աեղուում կանգնած զիւղի անունը Ժուկրուկի կամ Ժկրիկի է եղել և եկեղեցին էլ 1740 թ. է շնուռել: Փոքր ինչ էլ հարաւ նկատելի են մի բերդի աւերակներ, որ այժմ յայտնի են Վարդաբլուր անունով: Հաւանական է, որ առ հին Թերդիշմայր մնե զիւղը լինի:

Այստեղից արևմտահրախիւն՝ գտնուում է Սնկիջան: Սո հաւանօրէն նախկին Նորիք զիւղն է, տեղաւորուած Տաշխաչ լեռան լանջին: Հողը անջրտի է և զուրկ այգիներից: Ունի մի հասարակ եկեղեցի և մի մատուռ զիւղի ներքեւում: Բնակիչները Սալմասից գաղթականներ են, 50 տուն, 326 ար. 257 իդ. իմիասին՝ 583 հոգի: Մեծ մասամբ պանդխուում են դանագան քաղաքներ՝ աշխատելու:

Սրանից էլ հիւսիս՝ կայ մի փոքրիկ, աննշան զիւղ, 4 տուն թուրք բնակչով, որ կոչւում է Շորջա:

Անիշիկի ծոր.—Ժի և ժի, զարերում այս ձորը կոչուել է Գինէշիկաձոր¹⁾ կամ Թմաձոր²⁾ և ինչպէս երևում է բազմաթիւ զերեզմանաւոններից, բաւական խիտ բնակութիւն է ունեցել: Այսահետ

¹⁾ Կարազանցի ժամանուն վրայ Մարտ իշխանի արձանագրութեան մէջ:

²⁾ Օքանէն պատճ. զ. 76,

կատարուած հնագիտական պեղումներն էլ ցոյց են տալիս, որ բրոնզի դարումն էլ բնակութիւն է եղել և բաւական բարձր կուլտուրայի հասել: Չորր բաւական նեղ է և մեծ մասամբ ժայռապատ, մանաւանդ նրա մյա մասը, որ միանում է Արքաշայի հովտին և որ կոչում է Ռեփի-Ծոր: Այս մասում կան բաւականաշափ քարայրեր, ուր երբեմն ապաւանել են հայերը թուրքերի յարձակումներից: Չորր միջով հովտը է մի գիտակ, որ յառաջնում է թէ այս և թէ որ մօտ գտնուող Փայա-դարա ձորակում ըըդխող սառնորակ ազրիւներից¹⁾: Դեստակը թէ Կերշիկ գիւղի մօտ և թէ նրանից ներք կազմում է միքանի հիանալի ջրընկեցներ:

Չորր հրեսիսային մասում, ոչ անմիջապէս ափին, այլ փոքր թնչ բարձր, լեռների գոգաւորութեան մէջ զրուած է Կնիշիկ գիւղը: Սովորական ծուռ ու ծուռ և նեղ փառոցների երկու կողմում բարձրանում են քարաշն, հասարակ տներ, առանց պարտէզների և կամ ծառերի: Գիւղի ներքնում ձգուած են պարտէզներ և տնկուած առաւելապէս ուռենիներ: Գիւղում կայ մի հին, հասարակ եկեղեցի, իսկ գիւղից գուրս իննը գերեզմանատուն, բառական գեղեցիկ խաչքարերով: Առաւելապէս հարաւարեկան մասում գտնուում են մեծ քանակութեամբ ծովային քարացած ժմմակներ: Բնակիչներից 10 տուն ընիիներ են, միւսները գաղթականներ չեն Բայազէտից, Խոյից, Ալաշկերտից և Վանից: Ընդամենը 47 տուն, 291 ար. 269 իգ. իմիտասին՝ 590 հոգի: Գիւղի կեսը պատկանում է Զուացի Վերիւնիներին, իսկ մեացածը՝ իրենց, գիւղացներին:

Կերշիկից մատ վեց վերստ ներքին, գիտի աջ ափին, մի փոքրիկ հարթութեան վրայ գտնուում է Սորբավանը հոյականոր մինասանոր, պաշտպանուած ժայռապատ բնականն: Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, որովհետեւ միքանի տուն հայերը նեղուելով թուրքերից՝ գտղթել են ուրիշ գիւղեր: Ընդամենը 38 տուն են, 179 ար. 162 իգ. իմիտասին՝ 341 հոգի:

Մրա հանդէպ, զետակի ձախ ափին, Մորրզազ լերան լանջին փուռած է Ամազու փորբիկ, թրքարնակ գիւղը, ուր այժմ զըմնուում է մի կիսաւեր, հասարակ եկեղեցի և գիւղից գուրս՝ մի հին գերեզմանատուն: Գիւղը պատկանուում է երեսանցի Եղիշազարեանին: Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, որովհետեւ միքանի տուն հայերը նեղուելով թուրքերից՝ գտղթել են ուրիշ գիւղեր: Ընդամենը 38 տուն են, 179 ար. 162 իգ. իմիտասին՝ 341 հոգի:

¹⁾ Այս ազրիւներից ուռենին յիշուակութեան որժանի է Զբախանապարհուց, որ ըինում է Փայտ-զարայում մի մեծ սառակախներով զառած քարոյրէ միջից: Այժմ սառելուից թուրքերը, մասամբ և հայերը, ովտ են գալիս պատճեղ՝ ուրիշ համարկալ թէ ազրից և թէ շորոյցը:

²⁾ Մանրամասն եկացարաւութիւնը ուն եւսեացը վակերի մասունք: